ՏԵՂԵԿԱՆՔ

«Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի (այսուհետ՝ գանձապետարան) գործունեության իրավական հիմքերը, կարգավորում է գանձապետարանի գործունեության հետ կապված հարաբերությունները:

Deleted: գանձապետական համակարգը (այսուհետ՝ գանձապետարան)

Հոդված 2. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակն է գանձապետարանի գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորման միջոցով ապահովել Հայաստանի Հանրապետության և համայնքների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արդյունավետ կառավարումը;

Deleted: կառավարման համակարգի առկայությունը

Հոդված 5. Գանձապետարանի խնդիրները

Գանձապետարանի խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության և համայնքների դրամական միջոցների կառավարման և ծախսերի ֆինանսավորման կազմակերպումը.

Deleted: գործի

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական և համայնքների բյուջեների կատարման կազմակերպումը.

գ) Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման հետ կապված հարաբերությունների նորմատիվային կարգավորման մեթոդական ապահովումը.

Deleted: գ) Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեների կատարման հետ կապված հարաբերությունների նորմատիվ կարգավորման մեթոդական ապահովման կազմակերպումը.¶

դ) Հայաստանի Հանրապետության և համայնքների տնօրինության տակ գտնվող դրամական միջոցների մուտքագրման և դրանց հաշվին ծախսերի՝ լիազոր մարմնի գանձապետական միասնական հաշվով կատարման կազմակերպումը.

ե) պետական հիմնարկների ֆինանսական գործունեության մասին հաշվետվություններ կազմելու, ներկայացնելու և ամփոփելու հետ կապված հարաբերությունների նորմատիվային կարգավորման և բյուջետային հատվածում հաշվապահական հաշվառման նորմերի սահմանման ապահովումը.

Deleted: նորմատիվ

զ) պետական և համայնքների բյուջեների կատարման ընթացքում պետական հիմնարկների կողմից կատարվող վճարումների նկատմամբ նախնական հսկողության իրականացումը.

է) Հայաստանի Հանրապետության և համայնքների ֆինանսական հոսքերի սպասարկման կազմակերպումը.

ը) պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերով (հաշիվներով) գործառնությունների հաշվառումը.

թ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների, արտաբյուջետային միջոցներով գործառնությունների կատարման մասին ֆինանսական հաշվետվությունների ստացումը, դրանցում արտացոլված տեղեկությունների արժանահավատության գնահատումը, ամփոփումը և ներկայացումը.

ժ) Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի սպասարկումը.

ժա) Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ընթացիկ կառավարումը.

ժբ) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված ապրանքային վարկերի և դրամաշնորհների (գրանտների) դրամայնացման հաշվառումը և դրա հետ կապված գործառույթների համակարգումը և հսկումը (մոնիտորինգ).

ժգ) Հայաստանի Հանրապետության նկատմամբ առաջացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պարտավորությունների սպասարկումը.

ժդ) սույն օրենքից բխող այլ գործառույթների իրականացումը:

Հոդված 7. Գանձապետարանի աշխատակիցները

1. Գանձապետարանի աշխատակիցներ են համարվում Կենտրոնական գանձապետարանի և գանձապետարանի ստորաբաժանումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հաստիքացուցակներում ներառված պաշտոնները զբաղեցնող անձինք:
2. (մասն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-18-Ն)
(7-րդ հոդվածը փոփ. 22.12.10 ՀՕ-18-Ն)

Հոդված 8. Գանձապետարանի խնդիրների իրականացման ընթացքում այլ մարմինների հետ առաջացող հարաբերությունների կարգավորումը

1. Գանձապետարանի խնդիրների իրականացման ընթացքում այլ մարմինների հետ առաջացող հարաբերությունների կարգավորման նպատակով բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման հոդվածներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր մարմնում (այսուհետ՝ պետական մարմին) օրենքով սահմանված կարգով նշանակվում է գլխավոր ֆինանսիստ;
2. Գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է պետական մարմնի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է պետական մարմնի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ և իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ;
3. Գլխավոր ֆինանսիստի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում պետական մարմնի ղեկավարի հրամանով նրան փոխարինում է այլ պաշտոնյա:
4. Պետական մարմնի և համակարգի պետական հիմնարկների ֆինանսական և հաշվապահական ծառայությունների կառուցվածքը և խնդիրները սահմանվում են լիազոր մարմնի համաձայնությամբ:

Հոդված 9. Գլխավոր ֆինանսիստի պարտականությունները

1. Գլխավոր ֆինանսիստն ապահովում է պետական մարմնի կողմից՝
ա) ֆինանսական կառավարման համակարգերի առկայությունը.
բ) գնումների մասին օրենսդրությանը համապատասխան՝ գնումների համակարգի առկայությունը:
2. Գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է պետական մարմնի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և դրա հրապարակայնության ապահովման համար և ձեռնարկում է օրենսդրությամբ սահմանված միջոցներ՝
ա) պետական մարմնի կողմից օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական միջոցների հավաքումն ապահովելու համար.
բ) միջոցների վատնումը, չնախատեսված ծախսերի կատարումը կանխելու համար.
գ) պետական մարմնի ֆինանսական պարտավորությունների և հիմնական միջոցների կառավարման համար, ներառյալ՝ հիմնական միջոցների հաշվառումը, պահպանությունը և շահագործումը.
դ) համակարգի պետական հիմնարկներին՝ բյուջետային դասակարգմանը համապատասխան, բյուջեով նախատեսված միջոցների բաշխումն ապահովելու համար:
3. Գլխավոր ֆինանսիստը պարտավոր է՝
ա) պետական մարմնի և/կամ համակարգի որևէ պետական հիմնարկի միջոցներ հատկացնելուց առաջ համոզվել, որ վերջինս պահպանում է ֆինանսական միջոցների կառավարման կանոնները և պահանջները.
բ) ապահովել պետական մարմնի կողմից սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջների կատարումը.
գ) ապահովել պետական մարմնի անունից լիազոր մարմնին համապատասխան հաշվետվությունների ներկայացումը՝ ծախսերի գերակատարումը կամ պետական մարմնի կողմից հավաքվող եկամուտների թերակատարումը բացառելու անհնարինության դեպքում.
դ) ապահովել պետական մարմնի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ սահմանված կարգով հաշվապահական գրանցումները.
ե) ապահովել ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով պետական մարմնի անունից ներկայացումը Հայաստանի

Deleted: պաշտոնի է նշանակվում և ազատվում գլխավոր ֆինանսիստ

Deleted: և համապատասխան լիազորությունների դեպքում կարող է կատարել այլ պարտականություններ

Deleted: արդյունավետ և հրապարակային օգտագործման

Deleted: շարունակում է ապահովել

Deleted: համակարգը

Deleted: սույն օրենքի և այլ ակտերի դրույթների պահպանումը

Deleted: գ) ապահովել ծախսերի գերակատարումը կամ պետական մարմնի կողմից հավաքվող եկամուտների թերակատարումը բացառելու անհնարինության դեպքում՝ պետական մարմնի անունից լիազոր մարմին այդ մասին հաշվետվությունների ներկայացումը.¶

Հանրապետության Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատ և լիազոր մարմին.

Deleted: Ազգային ժողովի

գ) լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ, այդ թվում՝ նաև տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակահատվածի փաստացի եկամուտների, ծախսերի և կանխատեսումների մասին:
(**9-րդ հոդվածը խմբ., փոփ. 22.12.10 ՀՕ-18-Ն**)

Deleted: ¶

Հոդված 10. Պետական հիմնարկի գլխավոր հաշվապահը

1. Պետական մարմնի համակարգի յուրաքանչյուր պետական հիմնարկում օրենքով սահմանված կարգով և վերադաս պետական մարմնի գլխավոր ֆինանսիստի համաձայնությամբ նշանակվում է հիմնարկի գլխավոր հաշվապահ:

Deleted: 1. Պետական մարմնի համակարգում յուրաքանչյուր պետական հիմնարկի ղեկավարը վերադաս պետական մարմնի գլխավոր ֆինանսիստի համաձայնությամբ նշանակում է հիմնարկի գլխավոր հաշվապահ:¶

2. Սույն օրենքով գլխավոր ֆինանսիստին վերապահված լիազորությունները և պարտականությունները պետական հիմնարկում իրականացնում է գլխավոր հաշվապահը:
3. Գլխավոր հաշվապահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում պետական հիմնարկի ղեկավարի հրամանով նրան փոխարինում է այլ պաշտոնյա:

Հոդված 12. Հայաստանի Հանրապետության և համայնքների ակտիվների ու պասսիվների հաշվառումը

Հայաստանի Հանրապետության և համայնքների ակտիվների ու պասսիվների հաշվառման նպատակով գանձապետարանն ապահովում է՝
ա) Հայաստանի Հանրապետության բյուջեների կատարման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պետական բյուջեի կատարման, համայնքների բյուջեների կատարման, արտաքին վարկերի հաշվին իրականացվող ծրագրերի, Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների պարտքերի և պետական ու համայնքների բյուջեների կատարման ընթացքում ստանձնված պարտավորությունների մասին հաշվետվությունների ստացումը, ամփոփումը, վերլուծությունը և լիազոր մարմնի կողմից դրանց արդյունքների սահմանված կարգով ներկայացումը.

Deleted: Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեների

բ) Հայաստանի Հանրապետության բյուջետային հատվածի վերաբերյալ պետական մարմիններից պետական հիմնարկների հաշվեկշիռների (ակտիվների ու պասսիվների), ֆինանսական հոսքերի (ներառյալ՝ արտաբյուջետային միջոցների գոյացման ու տնօրինման) մասին հաշվետվությունների ստացումը, ամփոփումը, վերլուծությունը և սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից դրանց արդյունքների ներկայացումը:

Հոդված 14. Գանձապետական միասնական հաշիվը

1. Կենտրոնական գանձապետարանի անվամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացվում և սույն օրենքով ու այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարվում է լիազոր մարմնի գանձապետական միասնական հաշիվը (այսուհետ՝ գանձապետական միասնական հաշիվ), որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված հաշիվ:
2. Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր միջոցները հաշվեգրվում են գանձապետական միասնական հաշվին:
3. Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային հիմնարկները չեն կարող ունենալ բանկային հաշիվներ առևտրային բանկերում (եթե այլ բան չի նախատեսված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով):
4. Հայաստանի Հանրապետության և համայնքների կողմից բոլոր վճարումներն իրականացվում են գանձապետական միասնական հաշվից (եթե այլ բան չի նախատեսված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով)՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:

5. Գանձապետական միասնական հաշիվը ներառում է գանձապետարանի կողմից վարվող հետևյալ ենթահաշիվները՝
ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների ենթահաշիվները.
բ) Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեների միջոցների ենթահաշիվները.
գ) պետական և համայնքների արտաբյուջետային միջոցների ենթահաշիվները (այդ թվում՝ ավանդային).
դ) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բանկային սպասարկման համար ենթահաշիվները.
ե) ծրագրեր իրականացնող գրասենյակների (անկախ դրանց կազմակերպաիրավական տեսակից) բանկային սպասարկման համար ենթահաշիվները:
5.1. Գանձապետական միասնական հաշվի հետևյալ ենթահաշիվները տնօրինում է լիազոր մարմինը՝
ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների չբաշխված միջոցների ենթահաշիվները.
բ) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ապրանքային տեսքով տրամադրված վարկերի և դրամաշնորհների դրամայնացումից առաջացող միջոցների կուտակման արտաբյուջետային ավանդային ենթահաշիվները.
գ) լիազոր մարմնի անվամբ՝ բյուջեների ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրման, առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) առաջացող միջոցների հավաքագրման և ավանդադրման նպատակով բացված արտաբյուջետային ավանդային ենթահաշիվները:
6. Գանձապետական միասնական հաշվի ենթահաշիվներից՝
ա) պետական մարմինները տնօրինում են՝
- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների այն ենթահաշիվները, որոնց համար այդ մարմինները հանդիսանում են բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներ,
- պետական հիմնարկների անվամբ բացված արտաբյուջետային (այդ թվում՝ ավանդային) ենթահաշիվները.
բ) տեղական ինքնակառավարման մարմինները տնօրինում են՝
- համայնքների բյուջեների միջոցների այն ենթահաշիվները, որոնց համար այդ մարմինները հանդիսանում են բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներ,
- համայնքային հիմնարկների անվամբ բացված արտաբյուջետային (այդ թվում՝ ավանդային) ենթահաշիվները.
գ) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները տնօրինում են իրենց բանկային սպասարկման համար բացված ենթահաշիվները.
դ) ծրագրեր իրականացնող գրասենյակները (անկախ դրանց կազմակերպաիրավական տեսակից) տնօրինում են այդ ծրագրերի իրականացման նպատակով նշված գրասենյակների բանկային սպասարկման համար բացված ենթահաշիվները:
(14-րդ հոդվածը փոփ. 24.10.07 ՀՕ-240-Ն, լրաց., խմբ. 30.04.13 ՀՕ-46-Ն)

Հոդված 16. Պետական մարմինների գործունեության մասին հաշվետվությունների կազմումը, ամփոփումը և ներկայացումը

1. Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով պետական մարմինը գանձապետարանին է ներկայացնում ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն): Տարեկան հաշվետվությունը, ի լրումն հաշվետու ժամանակաշրջանի գործունեության, այլ հարցերի հետ պետք է ներառի հետևյալ հիմնական բաղկացուցիչները՝
ա) պետական մարմնի ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ նկարագիրը, դրանք են՝
- նպատակները,
- խնդիրները, որոնց իրագործումը հնարավորություն կընձեռի հասնել նպատակներին,
- ծրագրերը, որոնք նպատակաուղղված են խնդիրների իրագործմանը, դրանց նկարագրությունը և ծրագրի յուրաքանչյուր բաղկացուցչի համար առաջարկվող քանակական և որակական ցուցանիշների սահմանումը,
- ֆինանսական՝ բյուջետային կամ արտաբյուջետային միջոցները,

- մարդկային ռեսուրսները.
բ) բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը՝ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ, որը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝
- տարեկան բյուջեն,
- հաստատված բյուջեում Ազգային ժողովի կողմից կատարված փոփոխությունները,
- հաստատված բյուջեում կառավարության և (կամ) պետական մարմնի լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները,
- ճշգրտված բյուջեն,
- աճողական մուտքերը/վճարումները,
- շեղումը ճշգրտված բյուջեից,
- շեղումների համառոտ պատճառները.
գ) հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պետական մարմնի ամփոփ հաշվեկշիռը՝ ըստ ակտիվների և պասսիվների.
դ) բյուջետային տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման.
ե) տվյալ բյուջետային տարվա ընթացքում ֆինանսական ակտիվների շարժի վերաբերյալ հաշվետվությունը (բացի դեբիտորական պարտքերից).
զ) տվյալ բյուջետային տարվա ընթացքում պարտավորությունների շարժի վերաբերյալ հաշվետվությունը (բացի կրեդիտորական պարտքերից).
է) բյուջետային տարվա ընթացքում կրեդիտորական պարտքերի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունը՝ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ.
ը) բյուջետային տարվա ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների փոփոխության վերաբերյալ հաշվետվությունը:
2. Պետական հիմնարկի գլխավոր հաշվապահը լիազոր մարմնի սահմանած կարգով պատրաստում և հիմնարկի անունից պետական մարմնի գլխավոր ֆինանսիստին է ներկայացնում ամսական հաշվետվություններ, որոնք պետք է ներառեն՝
ա) հաշվետվություն՝ նախորդ ամսվա ընթացքում պետական հիմնարկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ՝ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ.
բ) ընթացիկ ֆինանսական տարվա մնացած ժամանակահատվածի համար սպասվող եկամուտների և ծախսերի կանխատեսումները.
գ) ամփոփ գործողությունների նկարագրությունը, որոնց իրագործման արդյունքում հնարավոր կլինի ապահովել ծրագրավորված եկամուտները և ծախսերը:
Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը, սահմանված կարգով պետական հիմնարկներից ստանալով հաշվետվությունները, ամփոփում է դրանք և լիազոր մարմնի սահմանած կարգով ներկայացնում է վերջինիս:
Պետական հիմնարկներից ստացված հաշվետվություններից բացի, գլխավոր ֆինանսիստն ապահովում է նաև պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը և լիազոր մարմին ներկայացնելը:
Գլխավոր ֆինանսիստը հաշվետվության հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում նաև հաշվետվության մանրամասն վերլուծությունը՝ ծրագրի համեմատ շեղումների պատճառների բացահայտմամբ:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների, բյուջեների կատարման և պետական հիմնարկների ֆինանսական գործունեության նկատմամբ նախնական հսկողության իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների բյուջեների կատարման նկատմամբ գանձապետարանն իրականացնում է նախնական հսկողություն, որի կարգը սահմանում է կառավարությունը:
2. Նախնական հսկողության շրջանակներում, նախքան պետական հիմնարկների անվամբ բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական միջոցների ելքագրումը, գանձապետարանում գնահատվում է պետական հիմնարկների կողմից իրականացվող

Deleted: գործառական

Deleted: - Ազգային ժողովի կողմից հաստատված բյուջեում կատարված փոփոխությունները,¶ - կառավարության կամ պետական մարմնի լիազորությունների շրջանակներում կատարված վերաբաշխումները,

Deleted: գործառական

Deleted: գործառական

Deleted: գործառական

Deleted: Հայաստանի Հանրապետության և համայնքների

Deleted: Հայաստանի Հանրապետության և համայնքների

ֆինանսական գործառույթների համապատասխանությունը՝ բյուջեների կատարման գործընթացը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ ակտերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանության հայտնաբերման դեպքում պետական հիմնարկների անվամբ բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական միջոցների ելքագրումը ժամանակավորապես դադարեցվում է, որից հետո՝

ա) պետական հիմնարկների համար արձանագրված անհամապատասխանությունը վերջիններիս կողմից չկարգավորելու դեպքում գլխավոր գանձապետը հայտնում է լիազոր մարմնի ղեկավարին, որը տալիս է ցուցում հետագա գործողությունների մասին.

բ) համայնքների կողմից ստեղծված հիմնարկների համար գանձապետարանի ստորաբաժանումի պետը տեղյակ է պահում տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին, որն ապահովում է անհամապատասխանության շտկումը:

(17-րդ հոդվածը փոփ. 22.12.10 ՀՕ-18-Ն)

Հոդված 19. Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի սպասարկումը

Գանձապետարանն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի մարման և սպասարկման ծրագրավորումը և այդ ծրագրին համապատասխան՝ օրենքով սահմանված արտաքին պարտքի մարումը և սպասարկումը:

Հոդված 20. Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ընթացիկ կառավարումը

Գանձապետարանը Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներին բյուջեներին պատկանող դրամական միջոցների և ընթացիկ դրամական հոսքերի արդյունավետ կառավարման նպատակով մշակում և իրականացնում է ծրագրեր՝ ընթացիկ ներքին պետական պարտքի արդյունավետ կառավարման համար, ինչպես նաև ապահովում է ներքին պետական պարտքի սպասարկման հետ կապված գործառնությունների սպասարկումը:

Deleted: Հոդված 19.. Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի սպասարկումը¶ ¶ Գանձապետարանն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի սպասարկման ծրագրավորումը և այդ ծրագրին համապատասխան՝ արտաքին պետական պարտքի սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեի մասին օրենքների և համապատասխան համաձայնագրերով սահմանված պայմանների համաձայն:¶

Deleted: Հայաստանի Հանրապետության և համայնքների